ՆՈՐ-ԴԱՐ

№ 12 ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Զորեքշաբթի 3 Փետրվարի **1888** Զորեքշաբթի 3 Փետրվարի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 12

Տարեկան 10 րուբլի, վեց ամսով՝ 6 րուբլի, երեք ամսով՝ 3 ր. 50 կ., ամսով՝ 1 ր. 50 կ., հատով՝ 5 կոպէկ։
Բաժանորդ ընդունւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրատեղին Հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն յետադարձով։
Յայտարարութիւնների գնաւն 2 կ., երկրաւոր համար կրկնապատիկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող. — Բարեզօրծութիւնը հայերի մէջ։
Քրանիկան. — Լուրեր։
Քաղաքական. — Քաղաքական տեսութիւն։ Լուրեր։
Խառն — Լուրեր։
«Նոր-Դար»ի հեռագիրները։
Յայտարարութիւններ։
Բանասիրական.— Թաթախման գիշերը (Վերջ)։

Թիֆլիս, 2 փետրվարի 1888

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԵՐԻ ՄԷՋ

Նեղութեան ժամանակ կարեկցել մերձաւորին, նրա ցաւերին ցաւակից լինել, լսա չափու կարողութեան օգնել նրան, երբ նա օչնութեան է սպասում, թշուառ մարդուն մատ և բաժին հանել, երբ նա քաղցած է, երբ նա մերկ է, երբ նա ապրելու միջոց չունի — դա բարի գործ է։ Այդպէս վարուել ստիպում է մարդուս մարդկային զգացմունքը, այդպէս պատուիրում է անելու քրիստոնէական վարդապետութիւնը։ Մեր ժողովուրդը խեղճին օգնելու, կարօտեալին օգնութեան ձեռք մեկնելու բարի յատկութիւնը ունեցել է և ունի։ Հազար և բիւր անգամ կեանքի ամենօրեայ դէպքերը առիթ են տուել հայ ժողովրդի այդ բարի յատկութեան երևան գալուն։

Եթէ կամենանք այդ լսուել, պէտք է մեր եկեղեցիների, մեր բազմաթիւ դպրոցների, բարեգործական հաստատութիւնների, բազմաթիւ բարեգործների և կտակների մի ընդարձակ ցուցակ այստեղ մէջ բերենք։ Բաւական է ասենք, որ հայ ժողովուրդը իւր գրեթէ նեղութիւնների մէջ, անդադրմելի հալածանքի և ճնշման տակ և կեանքի տարօրինակ պայմաններում՝ ամեն ժամանակ, ամեն տեղ և ամեն երկրում չէ դադարել բարի գործ կատարելուց, չէ կորցրել հանրօգուտ, ազգօգուտ գործի համար իւր՝ այսպէս ասած, բնածին եռանդը։ Դրան կենդանի կամ աւերակ դարձած յուշարձանները կարելի է տեսնել Եւրոպայի արևմուտքում, կարելի է տեսնել Պանգեոի ափերում, մինչև անգամ Բիրմանիայում։

Մէկ 10—15 տարուայ ժամանակամիջոցում քանի՛ անգամ մեր երկրի հայ ժողովուրդը կոչուել է օգնելու Օսմանեան իշխանութեան տակ բնակուող եղբարցը։

Այժմ մեր երկրի հայ ժողովուրդը նոյնպէս կոչուած է օգնութեան ձեռք մեկնելու Չէյթունցի հայերին և Հանգանակութիւնը այդ մասին աջողութեամբ առաջ է գընում։ Մեզ հասած տեղեկութիւններից եմացել ենք, որ վերջին անգամ Չէյթունում պատահած հրդկիզութիւնից 700-ից աւելի տուն է այրուել, 250 խանութ, 5 եկեղեցի, 4 դպրոց և 3000-ի չափ մարդիկ մնացել են անպատսպար։ Վերջերումս ստացած մեր տեղեկութիւններից նոյնպէս իմանում ենք, որ Սուլթանի հրամանով թիւրք կառավարութիւնը բաւականացավ թեթևացրել է Չէյթունի հրկիզեալների վիճակը, հոգալով նրանց անհրաժեշտ պէտքերը, թէպէտև հրկիզեալներին շնորհուած գումարները, հակառակ Սուլթանի հրամանին՝ այնքան էլ արդարութեամբ չեն բաժանվում և այդ մասին արտունջներ են լսվում։ Բայց ինչ էլ որ լինի, թրքահայերը չեն կարող երախտագէտ չլինել դէպի իրենց Կայսրը, որ թշուառութեան ժամանակ կարեկցում է իրենց և թիւրքերը օգուտ չեն քաղում հայի թշուառութիւնից և ի չարը գործ դնում, ինչպէս անում են այդ քաղաքակիրթ և քրիստոնեայ երկիրների գաւակները, որոնք պղտոր ջրում ձուկ որսալ կամենալով, շատ տեղ են Չէյթունցիներին հաւատափոխ են ուզում անել, քրիստոնեաներին՝ քրիստոնէութեան գարձնելով և իսկապէս հաւատի առևտուր սկսելով։

Մեր խօսքը հայերի բարեգործութեան մասին լինելով, արդարև գովելի է Չէյթունցիներին օգնելու այն եռանդը, որ այսօր տեսնում ենք մենք մեր ժողովրդի մէջ։

Ամեն կերպ գովելով այդ եռանդը չենք կարող մեր ժողովրդի մէջ բարեգործական զգացմունքների արտայայտութեան մի կողմի վերայ ուշադրութիւն չդարձնել, որ, մեր կարծիքով, կեղծ է և դրա համար էլ մտածողի վերայ վերջ ի վերջոյ ծանր տպաւորութիւն է թողնում։

Մարդ մարդու պէտք է օգնէ. շատ լաւ. բայց ինչ կասէիք Ֆրանսիացուն, եթէ նա այդ մտքին հետևելով օգնէր թիւրքին, գերմանացուն, իսկ իւր արիւնակից եղբօրը՝ Ֆրանսիացուն նեղութեան ժամանակ անօգնական թողնէր։ Կարծում ենք, որ այդ տեսակ բարեգործութիւնը շատ օտարոտի է։

Աւելի հասկանալի և բնական կը լինէր, եթէ Ֆրանսիացին նախ և աւելի օգնէր իւր արիւնակից, իւր ազգակից Ֆրանսիացուն և յետոյ մտածէր օտար ազգի կարօտեալների վերայ։ Մենք հայերս ոչ մեծ և ոչ էլ հարուստ ազգի ենք պատկանում։ Եթէ բարեգործութիւն ենք ուզում անել և կարող ենք, նախ պէտք է օգնենք մեր ազգակից, մեր արիւնակից և մեր հաւատակից թշուառ հայերին. սա շատ բնական է և հասկանալի. թողնել թշուառ հայերին և օգնել օտարներին — սա մեզ համար անհասկանալի է։ Այս տեսակէտից գործի վերայ նայելով, կարող ենք մենք առաջ գնալ և ասել, որ բնական ենք գանում, երբ ազուլեցին առաջ կարօտ ազուլեցիներին է օգնում, զարաբաղցին՝ զարաբաղցուն, թիֆլիսցին՝ թիֆլիսցուն.....

Արդ՝ ինչպէս բացատրենք այս երևոյթը, որ մեր երկրի ժողովուրդը պատրաստակամ օգնում է մեր երկրից հեռու գտնուող հայերին և նրանց համար հանգանակութիւն է բաց անում, բայց իւր մէջ, այսպէս ասած, իւր տանը, աչքի առջևը կանգնած թշուառ հայերի համար հանգանակութիւն չէ բաց անում, յանձնաժողովները չէ կազմում, դեպի նրանց համարեա թէ անտարբեր է նա։

Մենք երկիւղ ենք կրում, թէ մի գուցէ մի քանի հարիւր չէյթունցիները հաւատափոխ չլինեն, չկորչեն ազգութեան համար, բայց չգիտենք էլ, որ — հազարից մէկ օրինակ — Թիֆլիսին մօտիկ, մի երեք վերստի վերայ Ծղնէթի գիւղի 130-ից աւելի բազկացած հայերը մէկ խօսք հայերէն չգիտեն, դպրոց, որ չընչին միջոցով կարելի էր պահպանել, մի քանի տարի է, որ վաճառած է և գիւղական երեխաները՝ տղայ և աղջիկ, որոնք սկսել էին հայերէն խօսել և հայերէն երգել գիւղական եկեղեցում, արդէն մոռացել են թէ լեզուն և թէ երգը... Եթէ կամենանք գործի և այլ կողմերը գնալ և մեր թեմից չդուրս գալ, հազար աւելի թշուառ և աւելի տխուր օրինակներ կարող ենք բերել, որոնք կաղացուցանեն, թէ ինչ թշուառ և անօգնական վիճակի մէջ է այսօր մեր թեմը, ինչպէս մեր աչքի առջև ժողովուրդը հաւատից սառչում, մոռացել սերունդը մայրենի լեզուից զուրկ կորչում է ազգի համար, թէպէտև մի փոքր բարեգործական եռանդ մեր ժողովրդի մէջ և մի փոքր պարտաճանաչութիւն իշխանաւորի կողմից — շատ բան կարելի պիտի լինէր ազատելու կորստեան անդունդից։

Շուշի քաղաքի բարձրութիւնից վայր իջնելով հենց մօտիկ գըտնուած գօրատեղին, որ Խանքէնդի է կոչվում, այդտեղ բնակվում են բաւականին թիւով հայեր, որոնք խեղճ են և չեն կարող իրենց հասմար մի միջոցաւոր հաստատուն դրօշ պահել։ Առանց մանրամասնութիւնների մէջ մտնելու, հաւաքած տեղեկութիւնների վերայ հիմնուած՝ կարող ենք ասել, որ այդտեղի հայերը այնպիսի պայմանների մէջ են դրուած, որ նրանք կարող են շատ շուտ ընկնել հաւատաուրացների ուռկանը և անջատուել — ազգային եկեղեցուց, սա մեզ համար անհասկանալի է։ Այդ չարիքի դէմ մաքառողը պէտք է լինել գալրացը, հենց այդ գալրացն է, որ օրհասական գրութեան մէջն է, թէպէտև չնչին միջոցով կարելի էր նրան կենդանութիւն տալ և պահպանել։

Հազարաւոր օրինակներից միմիայն երկու հայաբնակ քաղաքի մօտ գտնուող երկու գիւղերի գրութեան վերայ միայն մատնացոյց լինելով, կամեցանք ցոյց տալ, որ մեր ժողովրդի բարեգործական եռանդը մի փոքր օտարոտի է թշուառ մեզ, քանի որ նա հեռաւոր թշուառ հայերին օգնում է, բայց մոռանում է օգնելու այն թշուառ հայերին, որոնք իւր մօտ են գըտնվում։

Որպէս զի հայի մէջ յայտնուող բարեգործութիւնը ճշմարիտ և կատարեալ բարեգործութիւն ճանաչուի, պէտք է օգնել, որքան կարելի հեռաւոր կարօտեալ հայերին, դա բարի գործ է և հարկաւոր, բայց չպէտք է մոռանալ և այն թշուառ հայերին, որոնք մեզ հետ են ապրում և ոչ պակաս օգնութեան կարօտ են։

ՔՐՈՆԻԿՈՆ

Լրագրիս վերջին համարներից մէկում յայտնեցինք, որ Ս. Խաչ-քաղաքից Չէյթունցիների օգտին ստացել ենք 100 րուբլի։ Այդ գումարը հանգանակել են օր. Սարրա Քութաիսեանց, օր. Կ. Քեանդարեանց, պ. պ. Մ. Ազատեանց, Զ. Քութաիսեանց և Ս. Սափարեան։ Նուիրատուներն են.—Կարապետ Արզիմանեանց 3 ր., Գէորգ Խարայփէքեանց 1 ր., Կարապետ Նալբանդեանց 3 ր., Եղոր Դարչիեանց 1 ր., Առաքել Արզիմանեանց 1 ր., Գէորգ Արզիմանեանց 1 ր., տ. Եւա Արզիմանեանց 1 ր., Վարդան Քովխաչեանց 3 ր., Աւետ Ղալաբէգեանց 2 ր., Խաչատուր Մարգարեանց 1 ր., Սահմանեոս քահանայ Սերեբրակեանց 1 ր., Յակովբ Յովնաննեանց 1 ր., Աստուածատուր Ազիմանեանց 1 ր., Պետրոս Աւագեանց 3 ր., Կարապետ Քովխաչեանց 1 ր., տ. Եղիսաբէթ Քովխաչեանց 1 ր., Սահակ Մարգարեանց 3 ր., Գործատուն պ.ի. Յարութիւն և Յովհաննէս Գանձումեանցների և Գէորգ Մինասեանցի 6 ր., դարձեալ Գէորգ Մինասեանց 3 ր., Սարգիս Թաւարբէգեանց զղարցի 2 ր., Գէորգ քահանայ Աղաւեանց 2 ր., Վահան Աղաւեանց 1 ր., Աթանաս Ղաբալալեանց 2 ր., Աղէքսանդր Մարդարեանց 1 ր., Իսայ Նիկողոսեան Գօգինեանց 2 ր., Յարութ Չափուղեանց 1 ր., Աւագ Կոպեցեան 3 ր., Գէորգ Կատիչեանց 2 ր., Եղոր Պետրոսեանց 1 ր., Յովհաննէս Բոչկաչինեանց 1 ր., Գէորգ Սերեբրակեանց 2 ր., Արտեմ Կոպեցեանց 2 ր., ուստա Ղազար Պարսեանց (աշըղ Քեանդի) 2 ր., Խորէն Տէր Զաքարեանց 1 ր., Յովսէփ քահանայ Մուրադեանց 2 ր., Պետրոս Կաժենիկեանց 1 ր., Յովսէփ Տէր-Մովսէսեանց 2 ր., Բողդան Կրասիլնիկեանց 2 ր., Սիմէոն Մինասեանց 1 ր., Պօղոս Վաղարսեան Գէորգեանց 1 ր., Մարտիրոս Շիլաբեանց 1 ր., Դանիէլ Խուրխուրեանց 1 ր., Սարգիս Սերեբրակեանց 1 ր., ա. Մարիամ Սերեբրակեանց 1 ր., Սղխաբէթ Տաբակեանց 1 ր., Մալաք Չիկարխանեանց 1 ր., օր. Կ. Քեանդարեանց 2 ր., Մ. Ազատեանց 3 ր., օր. Սարրա Քութաիսեանց 1 ր., Աչակերաք Ծխական դպրոցին հասոյ Ս. Խաչ քաղաքի 1 ր. 10 կոպէկ, Զախար Զախարեանց 1 ր., Աղէքսանդր Լաչինեանց 1 ր., Գրիգոր Աչվազեանց 2 ր., Զաքարիա Քութաիսեանց 1 ր. և Ս. Սափարեանց 10 ր. 90 կոպ., ընդամէնն 101 ր., որից հանուած է 1 ր. պօտտալի ծախք։

—

ՄՈՍԿՈՒԻՑ պ. Պետրոս Եսայեան Գանձումեանցը ուզարկել է խմբագրութեանս «Նոր-Դար»ի երկու օրինակի բաժանորդագին—20 ր., խնդրելով, որ մի օրինակը ուզարկենք Մոզդոքի երկսեռ դպրոցների հոգաբարձութեան անունով, իսկ միւս օրինակի անօրէնութիւնը թողնում է խմբագրութեան։

—

Երկուշաբթի, փետրվարի 1-ի երեկոյեան Կովկասի բժշկական ընկերութեան ժողովը կայացաւ, ուր քննուեց բժիշկներից կազմուած մասնաժողովի զեկուցումը Քարի և Աճալալի ջրերի միմեանցից ունեցած առաւելութիւնների մասին։ Մասնաժողովը երկար քննութիւնից յետոյ եկել է այն եզրակացութեան, որ Աճալալի ջուրն առաւել մաքուր է և առողջարար՝ քան Քարի ջուրը։ Սակայն մասնաժողովի անդամներից մինն համաձայն լինելով հանդերձ այդ եզրակացութեան հետ, աւելացնում է իւր մասնաւոր կարծիքը, թէ՝ եթէ Քարի ջուրը բերուելու լինէր քաղաքից դուրս՝ գետի վերին կողմերից և այն էլ զոհիով մաքրուէր, աւելի լաւ կլինէր։ Ժողովին ներկայ էին բաւական ժողովուրդ՝ մանաւանդ քաղաքային իրաւաւորներից։

—

ՍԵՒԱԿՍԻՑ.—Երկու ամիս է, որ տեղս է գանվում ազգանուն Նոր-Մամադխանը—Էլիզ-խանի արբանեակներից մինը։ Ինչպէս տեղեկանում ենք, սա ևս պատկանում էր այն խաների թուին, որոնք միացած էին Էլիզ խանին անգլիացիների դէմ, Ղանդահարի մէջ վարած վերջին չտեսնուած կատաղի կռուին. նա պատմում է, թէ անգլիացիներն առաջարկել են իրենց գնալ և ապրել Հնդկաստանում, իսկ իրենք մերժել են։ Իմ հարցին, թէ ինչի նրանք չեն համաձայնել, նա պատասխանեց. «Անգլիան իմ խանիս հակառակորդն է. մի՞թէ կը վայելէ մեզ գնալ և մեր թշնամու տանը ապրել, ընդունել կարելի է մի մարդու, որը իւր ձեռքը չպատսխել է մեր ընտանեաց սուրբ արիւնին, խրկել և արտաքսել է մեզ մեր անից և այլն»։ Աւասիկ սա առաջ բերեց մէկ մէկ այն ամենը, որ տեղի են ունեցած իրենց հետ թէ Աբդանիայում և թէ Պարսկաստանում և ապա հաղորդեց, որ պարսկական կառավարութիւնը իրենց թոյլ է տուել բնակութիւն հաստատելու իւր հողի վերայ, իսկ իրենք այդ բանը մինչ օրս

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՏՂԵՐԻՆԴԻՑ. — Վլադիմիր տա-
ռում մարտակոչ ունի ուղղված ռուս
մտավորականության դեմ։ Ինչպես
տեսնում ենք, նա ռուս մտավորա-
կանության մեջ ոչ մի ուժ չի տես-
նում, որ կարող լիներ ընդդիմանալ
ռուսական կառավարության ամենա-
կատաղի հարձակումներին։ Ուրեմն
ինչպե՞ս կարելի է ենթադրել, որ
«Нов. Вр.»-ի նման թերթը կարող
է մի քանի տող գրել ընդդեմ Վլա-
դիմիրի, առանց ամենայն ուշադրու-
թյան ենթարկելու նրա ամբողջ հո-
դվածը։ Ընդհակառակն, մենք կար-
ծում ենք, որ «Нов. Вр.»-ի հոդվա-
ծը ամենայն ուշադրության է արժա-
նի, որովհետև նրա մեջ մենք գտնում
ենք ոչ միայն Վլադիմիրի, այլև
ռուսական ամբողջ մտավորականու-
թյան ներքին ամենախորին զգացում-
ները։ Ինչպես տեսնում ենք, ռուս
մտավորականությունը ոչ միայն
չի ընդդիմանում Վլադիմիրին, այլ
ընդհակառակն, ինչպես ասում է
«Нов. Вр.»-ը, նրան ընդունում է
իբրև իր ներկայացուցիչ։ Ուրեմն
ինչո՞ւ է «Нов. Вр.»-ը ընդդիմա-
նում Վլադիմիրին։ Ինչո՞ւ է նա
ասում, որ Վլադիմիրը ոչ ոքի չի
ներկայացնում։ Ինչո՞ւ է նա ասում,
որ Վլադիմիրը ոչ ոքի չի ներկա-
յացնում։ Ինչո՞ւ է նա ասում, որ
Վլադիմիրը ոչ ոքի չի ներկայաց-
նում։ Ինչո՞ւ է նա ասում, որ Վլա-
դիմիրը ոչ ոքի չի ներկայացնում։
Ինչո՞ւ է նա ասում, որ Վլադիմիրը
ոչ ոքի չի ներկայացնում։ Ինչո՞ւ է
նա ասում, որ Վլադիմիրը ոչ ոքի չի
ներկայացնում։ Ինչո՞ւ է նա ասում,
որ

2 րդ տեսակի 1 ֆ. $3^1/_2$ կ., 3-րդ տեսակի 1 ֆ. 3 կոպէկ։ Սպիտակ և դարբնի ալէրից խառն լաւագների 1-ին տեսակի 1 ֆ. 5 կ., 2 րդ տեսակի 1 ֆ. 4 կոպէկ։ Տաւարի մսի 1-ին տեսակը, առանց ոսկրոտ կտորի, 1 ֆ. 8 կ., 2 րդ տեսակի 1 ֆ. 7 կ., սուկի 1 ֆ. 14 կոպէկ։ Ոչխարի մսի 1 ֆ. 9 կոպէկ։ Խոզի մսի 1-ին տեսակի 1 ֆ. 8 կ., 2-րդ տեսակի կաշիով 1 ֆ. 7 կոպէկ։ Այս գները պարտաւորեցուցիչ չեն դիւղերից բերած և թիֆլիսի հրապարակի վերայ վաճառուղ մթերքների համար։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Ձերբակալութիւնները Թիւրքիայում.— Չանազան լրագիրների կարծիքները.— Աւստրիա-Վերմանական դաշնագրի առթիւ զանազան կարծիքներ.

Թիւրքիայում հպերից ձերբակալութիւններ է անում կառավարութիւնը՝ կասկածելով նրանց հետաւորմութեան վերայ։ Կառավարութեան սրած մի քանի խուզարկութիւնների միջոցին գտնուել են մի քանի կասկածելի թղթեր՝ որոնք առիթ են տալիս կառավարութեան կարծելու, իբրեւ մի ընդարձակ դաւադրութիւն է պատրաստւում իր դէմ։ Արդէն այդ լուրը մեզ հաղորդեց «Նոր-Դար»-ի սեփական թղթակիցը Կ. Պօլսից՝ բայց մանրամասնութիւնները մինչև այժմ էլ յայտնի չեն։ Մենք առայ՛ժ բերում մի քանի թերթերից այդ մասին հաղորդուած տեղեկութիւնները։

Անգլիական «Standard» լրագրին, օրինակ, գրում են Կ. Պօլսից. «Թէ մայրաքաղաքի մէջ և թէ դաւառներում մի քանի հպերի ձերբակալուելը, որի վերայ չատ է խօսւում վերջերս, հետևում է հետև. վանի եպիսկոպոսը (?) այցելութեան էր գնացել վանի չրջականերն իր թեմում, ուր առիթ է լինում մի քանի քիւրդերի վարմանքի դէմ գանգատ ներկայացնելու թիւրք կառավարութեան՝ որոնք և ձերբակալւում են։ Բայց նրանք և իրենց բարեկամները, գրա փոխարէն եպիսկոպոսին (?) ամբաստանում են կառավարութեան, թէ դա մտանկից է մի յեղափոխական չարժման, որ, ինչպէս կարծւում է, գոյութիւն ունի ժողովրդի մէջ. այդ պատճառով եպիսկոպոսը (?) անմիջապէս ձերբակալուելով բանտարկւում է։ Այդ առիթ մի քանի հպեր ևս ձերբակալւում են թէ վանի և թէ Բիթլիսի մէջ։ Միևնոյն ժամանակ էլ Կ. Պօլսի մէջ մեծ մասամբ վաճառականներից, ձերբակալւել են տիզդ հպի և բանտարկել են՝ բաժանորդ լինելու համար մի հպերէն թերթի, որ հրատարակւում է Մարսէլում և ներթագրւում է, թէ ընդհանուր սկզբունքների դառը պաշտպանելուն է ծառայում։ Այս վաճառականներից մէկի նշանադրութիւնը (trade mark) ներկայացնում է երկու կանգնած առիւծներ՝ մի ասղի գէմ։ Թէպէտ պաշտօնեաների համար մեծ կասկածների պատճառ համարուեց այդ, որովհետև ասղը Օսմ. կայսրութեան խորհրդանշանն է։ Դիւրազգաց թիւրք կառավարութիւնը կարծում է, թէ կազմակերպուած մի դաւադրութեան վերայ է ձեռք դրած, բայց իւր այդ գաղափարը հաստատելու համար մինչև այժմ դեռ մի չօշափելի փաստ չէ գտել։ Ցոյս կայ, որ ձերբակալուած անձերը չատով կազատուին փորձեր են լինում, որ փակեն գաւառների մէջ բացուած այն բազմաթիւ դպրոցները, որոնք պահւում են հպերի ծախսով։ Մայրաքաղաքիս մէջ խուզարկութիւններից և կառավարութեան անհանգիստ դէպքեր ունենալուց ազատ մնալու համար, դիւանական թղթերը և թղթակցութիւնները փոխադրուած են եկեղեցի, եւ՚լի անվտանգ համարելով այնտեղ։ Այսպիսի չարձակողական խիստ միջոցների հանդարտարար հպերի դէմ՝ բոլորովին անքաղաքագիտական է»։ Իսկ «Le Sémaphor de Marsielle» ին գրում են. «Մի քանի օր է, որ այստեղ մեծ չուղում է տիրում հայազգայնների մէջ, որ Կ. Պօլսի մէջ առնուազն 300,000 հոգուց է բաղկացած։ Մի քանի հոգի ձերբակալուեցան Սմիռնիայի մէջ՝ հետևեալ դէպքերի պատճառով. Մի կրպրոնական մանուածոյով կաչ այստեղ «Միացեալ Ընկերութիւն» կոչուած ընկերութեանը, որ հիմնուած է ուսում տարածելու համար Ասիաբնակ հայ ժողովրդի դիւաւոր կեդրոնների մէջ.—Վան, Բիթլիս, Էրզրում, Տիարբէքիր, Մաշ և այլն։ Երկար ժամանակից ի վեր այստեղ սովորութիւն կայ, որ ամեն տարի պարահանդէս տրուի, դեսպանների հովանաւորութեան տակ, ի նպաստ ընկերութեան և իրենց 40-ի չափ ուսումնարանների։ Այս տարի պարահանդէս չպիտի տրուի, որովհետև ընկերութիւնը լուծուած է և իւր անդամներից չատերը, ինչպէս ինձ հաստատացրին, բանտարկուած են»։ Ի հարկէ, այս լուրերը չափազանցացած են և գրողներն էլ միայն մի քանի հոգիներ են, որոնք ամեն անգամ միշտ ցանկացել են ի զուր ազմուկ բարձրացնել և ժողովրդի աչքին թող փչելով՝ իրենց չահերն առաջ տանել և վնասել գործին։ Այս ձերբակալութիւնների մասին մի քանի անգամ, ի տարիք նկատի չափազանցացած և բոլորովին խեղաթիւրած փաստերով տեղեկութիւններ են հաղորդուած ռուս թերթերին, որոնց մէջ «Русс. Курь.»-ին գրողը համարեա բառ առ բառ հաղորդում է այն՝ ինչ որ ֆրանսիական թերթում և Թիֆլիսի մի հայ թերթում են գրել, և որոնց ճշմարտութիւնը խիստ կասկածելի է։

Սակայն Թիւրքիային ամեն անհանգստացնում են այդ ձերբակալութիւնների միջոցին գտնուած մի քանի թերթերն այն պատճառով, որ միևս կողմից էլ լուրեր են տարածւում, թէ իբր Ռուսիան մտադիր է Հայաստանին տիրելու։ Արդէն «Русс. Курь.»-ին հաղորդում են, թէ թիւրքական կառավարութեանը հաղորդել են, իբր թէ Ռուսիան է դրդում հպերին, իսկ եւրոպական թերթերն այդ վերջին հանգամանքի մասին էլ գրում են։ Լօնդոնում հրատարակուող «Times» թերթին Կ. Պօլսից հեռագրում են, որ Թիւրքիան ճշմարիտ որ անհանգիստ է տարածուած այն լուրերի մասին, որով Ռուսիային զանազան միաւորներ են վերագրում փոքր-Ասիայի վերաբերմամբ։ Բ. Դրան մէջ լաւ հասկանում են, պետութիւնները եթէ թշնամարար վերաբերուելու լինեն Ռուսիայի միջամտութեան բոլորական գործերին, Ռուսիան կարող է իւր զօրքերը չարժելով Հայաստանի կողմից ստիպել Թիւրքիային բանալու իւր խազը և որոշելու երկուսից մինը՝— կամ իրեն Ռուսիայի կատակից պիտի լայտնէ և այդ դէպքում կատարէ նրա պահանջը Բօլզարիայի և սրինդ Ֆերդինանդի վերաբերմամբ, և կամ պիտի միանալ ռուսական միջամտութեան հակառակ պետութիւններին և այդպիսով զրկուի Հայաստանից։ Վրդովմունքը այնքան մեծ է ասւում նաև այն հանգամանքով, որ այդ գաղտի գրաւումը կարող է Ռուսիան պատճառաբանել այն հանգամանքով, որ զրաւական ունենալ Թիւրքական պատերազմական տուգանքը ստանալու։ Լաւ է տարածուած, ասում է «Times»-ի թղթակիցը, որ Թիւրքիան դիմել է Պետերբուրգի իւր դեսպան Նաբիբ-փաշային հարց առաջարկել ռուսական կառավարութեանը Փոքր-Ասիայի վերաբերմամբ ունեցած նրա մտադրութիւնների մասին։ Նոյն խնդրի մասին «Corresp. de l'Est»-ին վարնայից հեռագրում են, որ իբրև թէ Բ. Դուռը Փոքր-Ասիայից տեղեկութիւնների հիման վերայ, թէ՝ Ռուսիան պատերազմական պատրաստութիւններ է տեսնում Կովկասում, մտադիր է այդ մասին ռուսական կառավարութիւնից որոշ բացատրութիւն պահանջելու։ Բնչ լինում չին հետաստում այդ լուրին, թէև միւս կողմից էլ բոլորովին չեն բացատում դրա մասամբ հիմք ունեցածը՝ այլի առաջ ունենալով հետևեալ տեղեկութիւնները, որոնց մէջ «Русс. Курь.»-ին գրողը համարեա բառ առ բառ հաղորդում է այն՝ ինչ որ ֆրանսիական թերթում և Թիֆլիսի մի հայ թերթում են գրել, և որոնց ճշմարտութիւնը խիստ կասկածելի է։

Սակայն Թիւրքիային ամեն անհանգստացնում են այդ ձերբակալութիւնների միջոցին գտնուած մի քանի թերթերն այն պատճառով, որ միևս կողմից էլ լուրեր են տարածւում, թէ իբր Ռուսիան մտադիր է Հայաստանին տիրելու։ Արդէն «Русс. Курь.»-ին հաղորդում են, թէ թիւրքական կառավարութեանը հաղորդել են, իբր թէ Ռուսիան է դրդում հպերին, իսկ եւրոպական թերթերն այդ վերջին հանգամանքի մասին էլ գրում են։ Լօնդոնում հրատարակուող «Times» թերթին Կ. Պօլսից հեռագրում են, որ Թիւրքիան ճշմարիտ որ անհանգիստ է տարածուած այն լուրերի մասին, որով Ռուսիային զանազան միաւորներ են վերագրում փոքր-Ասիայի վերաբերմամբ։ Բ. Դրան մէջ լաւ հասկանում են, պետութիւնները եթէ թշնամարար վերաբերուելու լինեն Ռուսիայի միջամտութեան բոլորական գործերին, Ռուսիան կարող է իւր զօրքերը չարժելով Հայաստանի կողմից ստիպել Թիւրքիային բանալու իւր խազը և որոշելու երկուսից մինը՝— կամ իրեն Ռուսիայի կատակից պիտի լայտնէ և այդ դէպքում կատարէ նրա պահանջը Բօլզարիայի և սրինդ Ֆերդինանդի վերաբերմամբ, և կամ պիտի միանալ ռուսական միջամտութեան հակառակ պետութիւններին և այդպիսով զրկուի Հայաստանից։ Վրդովմունքը այնքան մեծ է ասւում նաև այն հանգամանքով, որ այդ գաղտի գրաւումը կարող է Ռուսիան պատճառաբանել այն հանգամանքով, որ զրաւական ունենալ Թիւրքական պատերազմական տուգանքը ստանալու։ Լաւ է տարածուած, ասում է «Times»-ի թղթակիցը, որ Թիւրքիան դիմել է Պետերբուրգի իւր դեսպան Նաբիբ-փաշային հարց առաջարկել ռուսական կառավարութեանը Փոքր-Ասիայի վերաբերմամբ ունեցած նրա մտադրութիւնների մասին։ Նոյն խնդրի մասին «Corresp. de l'Est»-ին վարնայից հեռագրում են, որ իբրև թէ Բ. Դուռը Փոքր-Ասիայից տեղեկութիւնների հիման վերայ, թէ՝ Ռուսիան պատերազմական պատրաստութիւններ է տեսնում Կովկասում, մտադիր է այդ մասին ռուսական կառավարութեանից որոշ բացատրութիւն պահանջելու։ Բնչ լինում չին հետաստում այդ լուրին, թէև միւս կողմից էլ բոլորովին չեն բացատում դրա մասամբ հիմք ունեցածը՝ այլի առաջ ունենալով հետևեալ տեղեկութիւնները, որոնց մէջ «Русс. Курь.»-ին գրողը համարեա բառ առ բառ հաղորդում է այն՝ ինչ որ ֆրանսիական թերթում և Թիֆլիսի մի հայ թերթում են գրել, և որոնց ճշմարտութիւնը խիստ կասկածելի է։

Ասկէ

ԲԱՂԱԲԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

ԳԵՐՄԱՆԻԱ.—*Գերմանական կառավարութիւնը մեծ քանակութեամբ ձի է գնում Բէլգիայում։*

—«Weser Zeitung»-ի ստացած տեղեկութիւններին նայելով՝ *գերմանական բանակի հրամանատարութիւնը պիտի չանձնուի Սախսենկոբուրգին։*

ԲՕԼԳԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ.—*Բօլգարական գաղթականները, ինչպէս երևում է, հանգիստ չպիտի մնան իրենց տեղը։ Անցեալները թիւրքական վարչութիւնները ձերբակալել են էլի քառասուն հոգի բօլգար գաղթականներ զէնքերը ձեռներին, որոնք պատրաստուելիս են եղել Թիւրքիայից անցնելու Արևելեան Բումելիայի սահմանը։*

—*Բօլգարական «Ազատութիւն» թերթը հաղորդում է, որ պրինց Ֆերդինանդը Ֆիլիպպօպօլում եղած միջոցին՝ նրան ալցելել են անգլիական և ամերիկեան հիւպատոսները։*

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Եգիպտացորենը ալեքների դէմ.—Շատ դէպքեր են պատմուում, որոնց մէջ իւզով կարողացել են չազ թել ծովի սարսափելի ալիքներին։ Ամերիկի մի դէպք էլ պատմում է «Nautical Magazine» թերթը։ Դժեղակ փոթորկի միջոցին Արէյ անունով նաւապետը իր Jennie A. Cheuey երկկայմ նաւով գանւում էր Հիւսիսային 30 և արեմտեան 79 աստիճանի վրայ։ Մեծ առագաստը փոթորկից պատռուում է. բանում են փոթորկի առագաստը՝ այդ էլ է պատռւում։ Նաւը սկսում է ջուր առնել և համարեա թէ ամեն մի ալիք հասնում էր նաւի կտրկը։ Նաւապետը նաեւ ազատելու համար առագաստի պարկին մէջ 5 գալոնաչափ կաւազաի իւղ է ածում և կախում է նաւի աջ կողմը։ Նոյն րոպէին ծովի երեսը խաղաղում է և տաս ժամուայ ընթացքում նաւին և ոչ մի նաւ է դիպչում։ Նաւապետն ասում է, թէ նաեւ փոթորկից ազատողը իղն է, որովհետև, փոթորկի ատաստութեան միջոցին պարկը պայթում է և աչքի տեսեան միայն ծովն էլ խաղաղում։

*** «Pall Mall Gazette»-ի հրատարակիչն այս մօտերս երեք ժամ չարաչար հետազօտել խօսում էր Վանիտվէրբի իր թղթակցի հետ։ Երկու խօսակիցներն միմիանցից գանվում էին 3,804 մղոն հեռու։ Հրատարակչի հարցի պատասխանը ստացուել է 7 վայրկեանից։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 Յունվարի.— Ղազանի համալսարանում ուսումնարանական պարապմունքները կըսկսուին փետրվարի 1-ի և 8-ի մէջ։

«Граж.»-ը հաղորդում է, որ բարձրագոյն հրամայուած է մայիսի 1-ից ժողովրդական բեմերի վերայ, ուր յաճախում է հասարակ ժողովուրդը, ներկայացնել միայն թոյլատրուած այն պիէսներն, որոնք հատնուելիւն կտանան տպագրութեան գլխաւոր վարչութիւնից։

ԼՕՆԴՕՆ.—Լօրդերի պալատում գահական ճառին պատասխանի քննութեան միջոցին, Սալսբիւրին յայտարարեց, որ Ռուսիան անկեղծ և հաստատ խաղաղասիրական յայտարարութիւններ է արել։ Գլադստօնը գոհունակութիւն յայտնեց ազատական խնդրի լուծման վերաբերմամբ,—որ գլխաւոր ազդիւրն է Ռուսիայի հետ անբաւականութեան։ Գլադստօնն ասելացրեց, որ այսուհետև Անգլիան այլ և այլ առիթ չունի նախանձով վերաբերուելու Ռուսիայի սահմանների ընդլայնակուելուն։

ԳԱՀԻՐԻ.—Բէյլրութում արիւնահեղ կռիւ պատահեց քրիստոնեաների և մահմեդականների մէջ։

ՍԱՆ-ՐԷՄՕ.—Անդամահատութիւնը երեկ ուրիշ բժիշկների ներկայութեամբ տրախէօտոմիա կատարեց գերմանական գահաժառանգին։ Անդամահատութիւնն աջողուեց. պրինցը ոչ ուշագնաց եղաւ, ոչ ցաւ զգաց և ոչ էլ շատ արիւն հոսեց։ Անդամահատութիւնից յետոյ պրինցը լաւ էր զգում իրեն, բայց խօսելը արգիլուած է նրան և նա պէտք է մի քանի օր անկողնի մէջ անցկացնի։ Գլխաւոր վտանգն այժմ բրօնխիտն է։

ԲԵՐԼԻՆ.—Բայխտագն երբորդ ընթերցումից յետոյ, առանց վէճաբանութեան ընդունեց պատերազմական նպատակներով փոխառութիւն անելու օրինագիծը։ Օրինագծի համար տուել են բոլորը ձայն՝ բացի սօցիալիստների ձայներից։

ՀՈՒՄԲԵՐԳ.—Համբերգ թագաւորը ստորագրեց հացահատիկների մաքսը 3 լիրից 5-ի բարձրացնելու հրամանագիրը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 Յունվարի.—Հրատարակուած է պետական խորհրդի սրոշումը.—ակցիզ առնել՝ 75 հատ լուցկի պարունակող տուփից ½ կ., իսկ մի-մի կոպէկ առնել 75–300 լուցկիներից։ Ներմուծուող լուցկու 75-ից առնել ½ կ. ակցիզ, իսկ 75-ից մինչև 300-ից՝ 2 կոպէկ։ Լուցկու գործարանններից վերցնել վկայագիր՝—ձեռքով բանող գործիք ունեցողներից 50 ր., ձիով շարժողներից 100 ր., իսկ շոգեմեքենաներից՝ 150 ր., տարեկան։ Այս կանոններն սկիզբ գործադրուին 1888 թ. մայիսի 1-ից։

ՕԴԵՍՍԱ.— Այսօր սկսուեցան Նովոռօսիյսկեան համալսարանում դասախօսութիւնները։

ԼՕՆԴՕՆ.— Աթոռքին գործերի մինիստրի օգնական Ֆերգիւսօնը պատգամաւորների ժողովին յայտնեց, որ Անգլիան իւր վերայ ոչ մի պարտաւորութիւն չէ ընդունել միջազգային ընդհարումների միջոցին պատերազմական մասնակցութեան մասին։

ՊԱՐԻԶ.—Սահարական մինիստրը յայտնեց պատգամաւորների ժողովին, որ ցուցահանդէսը վերջնականապէս վճռուած է բանալ 1889 թ. մայիսի 5-ին։ Բէլգրութում մահմեդականների և քրիստոնեաների մէջ պատահած կռիւը ուղիղ չէ։

ՎԵՆՆԱ.—«Գր. Թղթ.»-ի մէջ հրատարակուած է մի յայտնի ատարիական զինուորական մասնագէտի յօդուածը, որ ապացուցանում է, որ ռուսական զօրքերը Լեհաստանում հաւաքելու մասին լուրերը չափազանցացրած են Վեննայում և Բեռլինում և թէ ծիծաղելի է Ռուսիային հանդիմանել նրա պատրաստութիւնների համար, մինչդեռ նոյնն անում են Աւստրիան և Գերմանիան էլ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Անցագրի հարցը քննող յանձնաժողովն ատարեց իւր պարապմունքը։

ՎԵՆՆԱ. «Neue Freie Presse» Հռօմից ստացել է Աւստրիա-Ունգարիայի, Գերմանիայի և Իտալիայի դաշնակցութեան գլխաւոր կէտերի վերաբերմամբ. Աւստրիա-Ունգարիայի և Իտալիայի դաշնակցութեամբ, Աւստրիա-Ունգարիան պարտաւորւում են բարեկամական չեզոքութիւն պահպանել Ֆրանս-իտալական պատերազմի միջոցին, իսկ Իտալիան պարտաւորւում է նոյնպիսի չեզոքութիւն պահպանել Աւստրիա-Ունգարիայի և Ռուսիայի մէջ պատերազմ ծագած միջոցին։ Բացի այդ, Աւստրիա-Ունգարիան պարտաւորւում է, որքան կարելի է, պահպանել Իտալիայի շահերը Միջերկրական ծովի վերայ և ոչինչ չանել Բալկան թերակղզու վերայ առանց կանխապէս իտալիայի հետ համաձայնուելու։ Իտալիայի և Գերմանիայի մէջ կայացած դաշնակցութեան մէջ հանդիսաւոր կերպով յայտարարւում է, որ դաշնակիցներից ոչ մինը և ոչ միւսը կամայական կերպով չի խանգարել խաղաղութիւնը և եթէ այդ պետութիւններից մէկը կենթարկուի Ֆրանսիայի յարձակման, միւս կողմը պարտաւոր է իւր բոլոր զօրութեամբ պահպանել յարձակման ենթարկուողին։ Յաւելուած յօդուածում որոշուած է, որ եթէ Ֆրանսիան և Թուրքիան ընդհանուր ուժով կը յարձակուին Աւստրիա-Ունգարիայի և Գերմանիայի վերայ, կամ միայն Գերմանիայի վերայ, այն ժամանակ երեք պետութիւնների բոլոր զինուած ոյժերը պէտք է հրապարակ գուրս գան։ Այդ դաշնակցութիւնները լրանում են Իտալիայի, Աւստրիա-Ունգարիայի և Անգլիայի առանձին պայմաններով՝ Աւստրիա-Ունգարիայի և Իտալիայի ծովափերը թշնամու զօրքերից պահպանելու մասին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 Յունվարի. Կաթոլիկական եկեղեցում բելգիական Հանգուցեալ գեսպան Պիւդզելի վերայ երկ կարդ կատարուելու միջոցին ներկայ էին Թագաւոր Կայսրը և Կայսերական տան միւս անդամները։ Կարգի միջոցին յանկարծամահ եղաւ բելգիական հիւպատոս Ֆելէյզենը։

ԲԵՐԼԻՆ, 1 Փետրվարի. Լօնդոնում հրատարակուող «Standard» և «Globe» թերթերը տեղեկանում են, թէ ինչպես կը վերաբերուի Գերմանիան այն դէպքում, երբ Ռուսիան իւր զօրքերը կը շարժէ դէպի Բօլղարիա և այդպիսով դէպի Աւստրիայի վերաբերմամբ սպառնական գիրք կը բռնէ։ «Koeln. Zeit»-ը այդ հարցերին հետևեալ պատասխանն է տալիս.—«Դաշնագրի իսկական իմաստով, ռուսական զօրքերի Բօլղարիա մտնելը Աւստրիայի վերայ յարձակում չէ»։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Յունվարի 15-ին Բարձրագոյն հաստատուած մինիստրների խորհուրդը որոշել է. ծխախոտի մաքսը վճարելու ժամանակը յետաձգել մինչև 1889 թ. յունվարի 1-ը։

ՎԻՏԵՐՕԿ.—Պետական գանձարանի դէմ եղած մի քանի միլիոնների վաստման գործի վերաբերմամբ նահանգական դատարանը վճռեց Սամօվիչին և Միլկեվիչին զրկելով բոլոր առանձին իրաւունքներից և առաւելութիւններից, աքսորել Տօմսկի նահանգը երկու տարի ժամանակով և արգիլուած է երկու տարի գուրս գալու բնակութեան տեղից և վեց տարի էլ Սիբիրի ուրիշ նահանգներն գնալու. Ադամկովիչը և Լիսօվսկին արդարացել են։

ՅՈՒՐԻՅԻՆ.—Կերօսինի գինը իջեցրած է պուդին 27 % առանց ակցիզի, առանց մանի։

Կ. ՊՕԼԻՍ.—Այն մատգրութիւններից յետոյ, որ ուզում էին Բեամիլբէյին Թիւրքական կօմիսար նշանակել Սօֆիայում, ռուսական դեսպան պ. Նելիդօվը սպառնայ Բ. Դրան կարել դիպլօմատիկական յարաբերութիւնները՝ եթէ այդ մտադրութիւնն իրաւի կ'իրագործուի։ Այդ պատճառով Բ. Դուռը հրաժարեց ներկայացուցիչ ուղարկելու մտքից։ Ռուսական դեսպանն նոյնպէս սպնդում է, որ Շերնօգօրիայի իշխանին յանձնուին Բալգասի միջադէպին մասնակից չերնօգօրցիներին։

Պրինց Ֆերդինանդը Ֆիլիպպօպօլից Սօֆիա վերադառնալիս, երկաթուղու ընկերութեան գործակալը գրաւեց այն վագօնը, որի մէջ զետեղուած էին պրինցի ձիերն ու կառքերը պատճառաբանելով, թէ պրինցը առանց ընկերութիւնից թոյլտուութիւն խնդրելու է ուղեւորել երկաթուղով։

ԼՕՆԴՕՆ. «Morning Post» թերթը հերքում է Միջին-Եւրոպայի երեք պետութիւնների դաշնակցութեան ընդդիմադործելու համար կազմուող ռուս-ֆրանս-անգլիական եռ ապետական դաշնակցութեան մասին լուրերը։ Լրագիրն ասում է, որ այդպիսի համախմբութիւնը վտանգաւոր կարող էր լինել եւրոպական խաղաղութեան համար, որ բոլորովին ապահովուած է, քանի որ Անգլիան և Թիւրքիան աջակից են միջին եւրոպական եռապետական դաշնակցութեան։ «Standard»-ն էլ իւր կողմից աւելացնում է, որ եռապետական դաշնակցութեան չպատկանող մի որև իցէ պետութիւն խաղաղութիւնը խանգարելու դէպքում, Անգլիան բոլոր իւր ազդեցութիւնը գործ կը դնէ յարձակողի դէմ առանց յարձակողական նպատակներով դաշնակցութիւն կապելու։ Նա պատրաստ է, սակայն, պաշտպանել միջազգային այն պայմանագիրները, որոնց տակ ինքը ստորագրել է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱՆ

1 Փետրուարի։

Լօնդոն	117 ր. 55	ր. 116,85	ր. 117,55 ր.
Համբուրգ	57,7 ր.	57½ ր.	57,6 ր.
Պարիզ	46,4 ր.,	46,35 ր.	
Պօլտինգերիալ	9 ր. 32 կ.		
Մարս. կուպօն.	187½ ր.	— կ.	
Արծաթ	1 ր. 35 կ.		

Բօրսային դիս. 6¼ և 7¼ %։
Պետական. բանկի 5%

1-ին չրջանի	99¾ ր.	— կ.	
2-րդ	98 ր.	— կ.	
3-րդ	98 ր.	— կ.	
4 րդ	98 ր.	— կ.	
5 րդ	98 ր.	— կ.	

Վերջին 4% — վաստատիւնը . . .81 ր. 87 կ.
100 և 1000 արևելեան փոխառութեան 5% տոմսեր,

1-ին չրջանի	98 ր.	37 կ.	դն.
2-րդ	97 ր.	37 կ.	դն.
3-րդ	97½ ր.	— կ.	

Առաջին 5% ներքին վաստատիւնան 5% տոմոզ գումարի տոմսեր . . . . 263½ ր. — կ.
2 րդ . . . . . 247 ր. — կ.
5½% բենտէր . 103 ր. — կ.
Ոսկէ բէնտ. . . . 194½ ր. — կ.
Թիֆ. քաղաք. վարկի ընկեր.
օբլիգ. . . . —

Պետերբուրգի բօրսային տրամադրութիւնը թոյլ է։

Խմբագիր-Հրատարակիչ
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«ԱՐԱՔՍԻ» ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

ԵՐԿՈՒ պատկերազարդ գրքի գինն է . . . . . 3 րուբլի
իսկ իւրաքանչիւրինը. . 2 ր. 50 կ.

Տեղիս տարարանի հաւելուն տառերը արդէն բանաձ լինելով՝ երկրորդ գիրքը հրատարակել կը կարողանանք դէպ ապրիլն։

Դիմել հետևեալ հասցէով. Петербургъ, Симеону Гуламирянцу.
Графскій переулокъ 7. 22.
3—2

ԿՕՖԷ ՄՕԿԿՕ
Ս. ՍԻՈՒ ԵՒ ԸՆԿ.
(M.) 50—14

Լոյս կը տեսնի 1888-ին առանձին գրքով
Գ. ՂՈՒԿԱՍԻ
ԲԱՐԵԳՈՐԾՆԵՐ
ՄԱՀՏԵՍԻ ՍԱՐԳԻՍ
ՄԻՎԱՐԴԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՓՇՐՈՒԱԾ ԿԵԱՆՔ
երկերը միասին։ Ժամանորգագինը 1 բ–էլ է ընդամենը։ Ժամանորդ գրուել կարելի է միմիայն «Նոր-Դար»-ի խմբագրատանը։ Օտար քաղաքներից դիմում են «Նոր-Դար»-ի խմբագրութեանը այսպէս. Тифлисъ, въ редакцію ежедневной армянской газеты «Норъ-Даръ».
(խմ.) X—15

1865 թ. 1882 թ.
ՍԱՎՎԱ ՄՕՐՕԶՕՎԻ ՈՐԴԻ ԵՒ ԸՆԿ.
ՆԻԿՕԼԱԵՒԱՆ ԱՆԻՓԱԿՈՒՐԱՑԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
Պատիւ ունի պատ. գնողներին տեղեկացնելու, որ 1888 թուի յունվարի 1-ից իւր վաճառականական պահեստը ԲԱԳՈՒ քաղաքում պիտի գետեղուի ԿՐԱՍԻԼՆԻԿՕՎԻ տանը, ծովափին (Նաբերէժնայա), ուր և խնդրւում է դիմել Ընկերութեան ապրանքների պահանջներով։
6—6

Կ. ԿԱՆԴԻՏԵՐ
Կ. Ս. ՍԱՓԱՃԵԱՆՑ
Սօղոլակի փողոց, տուն Թաշիրովի.
ՊԱՏՐԱՍՏԻ գանվում է ինձ մօտ, ամեն օր, շատ լաւ եաղլու, սիրօժկի, սօնչիկ, շօկօլադ, զայիա, թէյ, կաֆ, սեր, սիվիա, լիմոնադ, գելտերեան ջուր, խմորեղէններից՝ պրեանիկներ, կուլիչներ, պիրոժնի, պեչենի, քաղցրեղէն, վարենի, մարմելադ, տորթ, թխում կոնֆեկտներ՝ ամեն տեսակի և չափաւոր գներով։
ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՄ ամեն տեսակ պատուէրներ։
(ա.) 10—7

Дозволено цензурою. Тифлисъ 2-го Февраля 1888 г.
Տպարան Մ. Դ. Ռոտինեանց
Типографія М. Д. Ротинянцъ Гол. пр. д № 41.